

ՀԱՅԿԱԿԱՆ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ 400-ԱՄԵԱԿԸ

Ժամանակը իւր բնոյթի համեմատ գիտէ առաջ բերել անցաւոր և անանց բարիքներ, որոնք, մարդկութեան ձեռքն անցնելով, հետզհետէ կամ շուտով անյետ կորչում են կամ ծաղկում, բարգաւաճում են որքան հնարաւոր է շատերին բաղդաւորութեան մասնակից դարձնելով:

Տպագրութիւնը նոր ժամանակաշրջանի արշալոյսի այն առաջին վառվառն շողն էր, որը աստիճանաբար սկսեց մեծանալ ու աւելի ու աւելի լուսաւորել մարդկանց հոգին ու միտքը: Որոշ դասակարգի ձեռքին կեդրոնացած ու բարոյական, նիւթական շահագործման աղբիւր դարձած գիտութիւնը տպագրութեան շնորհիւ ազատագրուեցաւ մոգերի ու կախարդ-քրմերի խորհրդաւորութեան շղթաներով ամրացած տաճարներից:

Գիրքը, իմաստութիւնը, սեն ու սպիտակը այլևս հրկնային առանձին շնորհի արդիւնք չի նկուց դադարեցին, որ դարեր շարունակ պէսպէս մեկնութիւններով ձգնել էին ապացուցել գիտութեան քրմերը և տպագրութիւնը միանգամից ջնջեց գրքի և գիտութեան որոշ դասակարգի սեփականութիւն լինելու իրաւունքը և դարձրեց հանրային:

Մտաւոր ազատագրութեան այդ ամենակտրուկ ու անմիջական զէնք — գիրքը շնորհիւ տպագրութեան այլևս միայն ազնուականի կամ հարուստ վաճառականի սեղանի հազուադիւս դարչը լինելուց դադարեց ու նա դարձաւ ամենքին մատչելի, ամենքի համար հնարաւոր:

Այդ մեծ գիւտի օգուտը այնքան զգալի, այնքան մեծ ու գրաւիչ էր, որ անմիջապէս գիւտի հեղինակի հայրենիքից տարածուեց բոլոր շրջակայ ժողովուրդներին մէջ և սկսուեց մշակուել, կատարելագործուել: Տպագրութեան առողջ սաղմ, կենսունակութիւն ունենալու փաստւոր ապացոյցներն են կազմում այժմեան տպագրութեան հրաշալի նորանոր նուաճումները և տպագրութեան ծաղկումը: Ո՞րքան միլիոնաւոր զբօսըքներ, սրբան միլիոն տպարաններ, տեխնիկական յարմարութիւններ, սրբան գրադարաններ, ընթերցարաններ, որքան ժողովրդական հրատարակութիւններ, լրագրներ և այլն. և այս բոլորը միայն նրա համար, որ գիտութեան, բարոյականութեան, գեղարուեստի, գրականութեան վսիմ սկզբունքները մատչելի դառնան ժողովրդին,

հեշտացնեն հոգեւոր վերածնութեան դժուարին ու կարեւոր գործը:

Տպագրութիւնն է, որ գիտութեան գեղարուեստի ազնուական — անմատչելի բնոյթը փոխել է ժողովրդականի և այժմ ամեն ոք, որ իւր մշաքի լուսաւորութեամբ հետաքրքրոււմ է, կարող է հեշտ միջոցով իւր նպատակը իրագործել, մի բան, որ առաջնորդում հնարաւոր էր միայն սոսմիկներին համար:

Հայ ժողովուրդն էլ իւր ժամանակին կարողացել է այդ հանրամարդկային գիւտի օգուտն զգալ ու աշխատել է ինքն էլ իւր ովսանն մասնակից լինել այդ շարժմանը: 400 տարի է անցել այն օրից, երբ մեր պապերը անասելի դժուարութիւններով, երկար ճանապարհորդութիւններ, նիւթական գրկանքներ յանձն տունելով կարողացել են օտար երկրներում հայերէն գիրք տպել: Ժամանակ անցնելուց յետոյ միայն հնարաւոր է եղել մայր երկրում հաստատել տպարան և ժամանակի ոգու համեմատ կրօնա-բարոյական գրքեր տպագրել, ժողովրդի մէջ տարածել:

400 տարին բաւական ժամանակ է մի այդպիսի հանրօգուտ ձեռնարկութեան կանոնաւոր բարգաւաճման համար: Ստեփան հայ ժողովրդի արցունքը չէ ցամաքել երբէք, նրա թախած արեան հետքերը իսպառ չեն ջնջուել հոգի վրայից, նրա ձեռքից հրկաթէ պանդխտութեան գաւազանը չէ ընկել. բնական է, որ տպագրութիւնն էլ մեզանում չզարգանար այնպէս, ինչպէս հնարաւոր էր խաղաղ նստակեաց կեանք ունենալու դէպքում:

Չկան մեր մէջ հայերէն գրքեր — ահա ինչ է ստում մեր տպագրութեան 400-ամեակը. հայ ժողովուրդը գիրք է ուզում կարդալու և չի կարողանում գտնել: Չունինք հայ հրատարակչական ընկերութիւններ ինչպէս օտարազգիներն ունին, չկան նոյն իսկ զուտ տնտեսական նկատառումներով հիմնուած հրատարակչական ձեռնարկութիւններ: Որ ամենից ցաւալին է — գեռ դիրքը մեզանում հանրամատչելի չէ դարձել, դեռ նա այնքան աժան չէ գնով, որ շատերի սեղանի վրայ լինի: Ժողովրդական-էթանագին հրատարակութիւններ կանոնաւոր հիմքերի վրայ դրուած չունինք: Ամեն ինչ գեռ այսօր էլ անհատական, մասնաւոր ոյժերին է վստահացուած, այն, ինչ որ կուլտուրական ժողովրդների մէջ ընկնորութիւնների ձեռքն է անցել և աճում, ծաղկում է



օրէցօրս նշանակալից յօրելիանը որքան և իւր հիմքով, իւր էութեամբ սիրելի, ուշագրաւ լինի, այնուամենայնիւ տխուր մտքերի պատճառ է դառնում, մտքեր, որոնք մի անգամ ևս յիշեցնում են մեր հին ցաւը—որքան սիրում ենք շատ խօսել, քիչ գործել:

Յօրելիանի համար արդէն կովկասի քաղաքներում պատրաստութիւններ են տեսնում: Բնական է, որ հայկական տպագրութեան յօրելիանը համազգային դառնայ և ամեն քաղաք, դիւղ, աւան պէտք է իւր ջերմ մասնակցութիւնը ցոյց տայ այդ կուլտուրական մեծ տօնին: Պէտք է ամեն հայ, ուր էլ լինի, ինչ ուղղութեան ու դաւանութեան էլ հետևի, համոզուած կերպով աջակցէ համազգային կուլտուրական տօնը մնայուն յիշատակներով յաւերժացնելուն: Այդ տօնը մեր մտաւոր ազատագրութեանը, հոգևոր վերածնութեանը նպաստող ամենալաւ միջոցի ծաղկեցնելու կանոնաւորելու տօնն է լինելու:


Անշուշտ ուսուսհայ մեծ գաղութն ևս, որ նմանօրինակ դէպքերում մայր երկրին ձայնակցել է սրտագին, այս անգամ ևս նոյնպէս կաշխատէ, սիրով ու սղգային յուսալիցութեան ոգով տոգորուած, մասնակցել տօնին, կամ աւելի շուտ կատարել այդ տօնը. այժմեանից իսկ ձեռնարկելով կազմել մի պատշաճաւոր մարմնի—հիմնարկութեան միջոցով յանձնաժողով այդ նպատակով:

Հազուադէպ են մեր իրականութեան մէջ յուսատու, խրախուսիչ երևոյթները, էլ աւելի հազուադէպ են կուլտուրական-ազգային ձեռնարկութեան յօրելիանները:

Թող հազուադէպ լինի նաև այն սրտիտանգն աջակցութիւնը ու արգասարբեր ոգևորութիւնը, որ ընդհանրապէս հայ ժողովուրդը և մասնաւորապէս ուսուսհայ գաղութը պէտք է ցոյց տայ այդ պատուարիւր յօրելիանին:

նութիւն յանձն առնելով, կազմել են «Կենտրոնական Յօրելիանական Յանձնաժողով», որի անդամներն են 1) մեր պատկառելի դրամատուրգ Գաբրիէլ Ն. Սունդուկեան, 2) երգուեալ-հաւատարմատար Յ. Սպինդարեան, 4) բժշկապետ Բ. Նաւասարդեան, 5) վաճառականների աւագ և բօրսային կօմիտէի նախագահ Ա. Ն. Միլիան. 6) Դաւիթ Աւան-Իւզգաշեան, 7) բժշկապետ Կ. Ստեփանեան, 8) Լևոն Ա. Մանթաշեան, 9) բժշկապետ Ս. Մայսուրեան, 10) Ստեփան Սուլխանեան (գործակալ Ռուսաց Շոգենաւային Ընկ.), 11) Պաշ. Պաշատրեան (խմբագիր «Միֆ. Лист.» լրագրի), 12) բժշկապետ Ա. Շխեան, 13) Տ. Նազարեան (խմբագիր «Աղբիւր» և «Տարագ» հանդէսների), 14) Պաշ. Տ. Աֆրիկեան, 15) բժշկապետ Սամուէլ Շահպարտեան, 16) ինժեներ Գ. Կիրակոսեան, 17) Ստ. Մալխասեանց, 18) Առաքել Սարուխանեան, 19) ինժեներ Արշակ Բարեան, 20) Զաքարիա Մամուլեան, 21) Սարգիս Միլքումեան, 22) Արտաշէս Էնֆիաճեան, 23) Ա. Եղիկեան, 24) բժշկապետ Մ. Աղաջանեան, 25) իրաւաբան Յ. Ս. Ալիխանեան, 26) Կարապետ Սերովբեան (աւագ արհեստաւորների), 27) Բարսեղ Առաքելեան (աւագ մէլլանների), 28) Մնացական Պունունց, 29) Մարգիս Պարագեան, 30) Գրիգոր Նախշունեան, 31) Արամ Բաղդազարեան, 32) Եփրեմ Ծառուրեան, 33) Մինաս Սուլխանեան, 34) Գէորգ Բաշինջաղեան, 35) իրաւաբան Պետրոս Քալանթարեան, 36) տպարանատէր Մնացական Մարտիրոսեան, 27) ինժեներ Գրեարալեան, 38) Յար. Փիրալեան (գիւղատնտես և պետական Տնայնագործ. Կօմիտէի կառավարիչ), 39) Հայրապետ Աւետիսեան (առևտրական), 40) Քրիստափոր Յովսէփեան (առևտրական), 41) Ստեփան Մանուէլեան (Հաշուապահական կուրսերի տնօրէն), 42) Ալէքսանդր Ստեփանեան:

Այս յանձնաժողովը, որի պատուաւոր նախագահն է մեր պատկառելի դրամատուրգ Գաբրիէլ Սունդուկեանը, իսկ փոխ-նախագահներն են Յ. Սպինդարեան (որ և նախագահ բերօյի), Արշակ Միլիան (որ և նախագահ ֆինանսական մասնաժողովի) և բժշկապետ Բ. Նաւասարդեան, իսկ պատուաւոր անդամ բժշկապետ Յ. Գասպարեանը («Մշակի» ամենահին և ջերմաւոր բարեկամներից մինը), կազմել է իր միջից մի քանի մասնաժողովներ (կարգադիր բերօ, ֆինանսական, խմբագրական և այլն), աշխատանքը բաժանելու համար:



«ՄՇԱԿԻ» 40-ԱՄԵԱՅ ՅՕԲԵԼԵԱՆԸ

«Մշակի» խմբագրութիւնը, գոհացում տալու համար այն բազմաթիւ դիմումներին, որոնք լինում են իրան տեղեկութիւններ տալու, թէ ինչ վիճակի մէջ է 40-ամեայ տօնախմբութեան հարցը, հնարաւորութիւն ունի այսօր յայտնել հետևեալը:

Թիֆլիսում մի խումբ անձինք, նախաձեռ-